Բանալի խոսք.

Հակոբոս 1:2-8

Բոլորովին ուրախություն համարեք, եղբայրներս, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք,

գիտենալով որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում: Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք, և ոչ մի բանի պակասություն չունենաք:

Բայց եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նորան: Միայն թէ թող հավատքով խնդրի առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծված և տատանված ալիքին: Այն մարդը թող չկարծի, որ Տիրոջից մի բան կառնի: Երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճանապարհներում:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇՈՒՄԸ

Օրինակ. ՄԻԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԵՐԸ

Երբ Հադսոն Թեյլորը Չինաստանի ներքին միսիայի տնօրենն էր, նա հաճախ էր հարցազրույցներ անցկացնում ապագա միսիոներների հետ: Մի անգամ նա հանդիպեց մի խումբ դիմորդների, որպեսզի ստուգեր նրանց ծառայության դրդապատճառը:
«Ինչո՞ւ եք դուք ցանկանում միսիոներ լինել օտար երկրում», - հարցրեց նա նրանցից մեկին:

«Ես ցանկանում եմ գնալ, որովհետև Քրիստոսը պատվիրեց մեզ գնալ ողջ աշխարհը...», - պատասխանեց նա:

«Ես ցանկանում եմ գնալ, որովհետև միլիոնավոր մարդիկ մահանում են առանց Քրիստոսի», - պատասխանեց ևս մեկը:

Մյուսներն այլ պատասխաններ տվեցին:

Հադսոն Թեյլորն ասաց նրանց. «Որքան էլ բոլոր այս դրդապատճառները լավը լինեն, դրանք կձախողեն ձեզ փորձություններին, նեղություններին, տառապանքների և մահվան սպառնալիքների ժամանակ: Կա միայն մեկ դրդապատճառ, որը կպահպանի ձեզ նեղություններին և փորձություններին մեջ՝ Քրիստոսի սերը»:
Իմ անունով մեկ բաժակ ջուր տա...

1. ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՆ

1. **Ուշադրություն դարձրեք, որ Հակոբոսը չի ասում. «Բոլորովին ուրախություն համարեք, եղբայրներս, եթե կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք»: Ո՛չ, նա ասում է. «...երբ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք»:**

   Quote. Someone asked C.S. Lewis, "Why do the righteous suffer?" "Why not?" he replied. "They're the only ones who can take it."

   Ինչ-որ մեկը հարցրեց . Սի. Էս Լյուիսին. «Ինչո՞ւ են արդարները չարչարվում»: «Ինչո՞ւ ոչ», - պատասխանեց նա: - «Նրանք միակն են, ովքեր կարող են կրել դա»:

   - **Չարչարանքը քրիստոնեական կյանքի անբաժան մասն է:**
     - **Այն կար Քրիստոսի կյանքում (Հովհաննես 16:33):**

       Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին:
     - **Այն կար Պողոսի կյանքում (Հռոմեացիների 8:17):**

       Եւ եթէ որդիք՝ ապա ժառանգներ էլ, Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ. որ եթէ նորա չարչարանքներին կցորդ ենք՝ փառքին էլ մասնակից լինինք:
     - **Այն կար Պետրոսի կյանքում (Ա Պետրոս 4:12), նաև Բ Տիմոթեոս 3:12:**

       Սիրելիներ, օտար բան մի համարէք այն բորբոքուած նեղութիւնը որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թէ մի օտար բան է պատահում ձեզ:

       Եւ ամենը որ կամենում են աստուածպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսում, հալածանք պիտի կրեն.

Մեջբերում. «Հոգևոր ընթացքի երկու ամենաբարդ փորձություններ են համբերությունը, որպեսզի սպասենք ճիշտ պահին, և խիզախությունը, որպեսզի չհիասթափվենք այն բանից, ինչին հանդիպելու ենք», - Պաոլո Կոելյո

2. ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐՆ ԱՃ ԿՈՒՆԵՆԱՆ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ:

- Խոսքեր 3-4-ը բացատրում են, թե ինչո՛ւ մենք պետք է ուրախ լինենք նեղությունների մեջ:

«Գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում: Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք, և ոչ մի բանի պակասություն չունենաք»:

- Նեղություններն աստվածապաշտ բնավորություն են զարգացնում, ինչը կարողություն է տալիս մեզ «պարծենալ նեղությունների մեջ»՝

  «...գիտենալով, որ նեղությունը համբերություն է գործում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս, հույսն էլ չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը փռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռով, որ տրվեց մեզ» (Հռոմեացիների 5:3-5):

- Այնուամենայնիվ, մենք պետք է զգույշ լինենք, որ երբեք արդարացումներ չունենանք այն «նեղությունների և փորձանքների» համար, որոնք մեր սեփական սխալների արդյունքն են:

  «Ձեզանից մեկը չչարչարվի ինչպես մարդասպան, կամ գող, կամ չարագործ, կամ ինչպես ուրիշի բանին խառնվող» (Ա Պետրոս 4:15):

3. ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ԿՀԱՂԹԱՀԱՐԵՆ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

- Այն, որ «համբերությունը» պետք է «կատարյալ գործ ունենա», օգնում է մեզ հասկանալ, որ Աստված ավարտի կհասցնի Իր գործը: Հավատացյալները կդիմանան նեղություններին՝ մեր օգտի և Նրա փառքի համար:

  «...շատ նեղություններով պետք է մեզ մտնել Աստծո արքայությունը:» (Գործք 14.21):

  «Շատ են արդարի նեղությունները, բայց Տերն այն ամենից փրկում է նրան:» (Սաղմոս 34:19):

ԱՄՓՈՓՈՒՄ

Երբ Վիլյամ Սանգստերին ասացին, որ նա մահանում էր զարգացող մկանային հյուծումից, նա կայացրեց չորս որոշում և հավատարմորեն պահեց դրանք.

1) ես երբեք չեմ տրտնջա,
2) ես այնպես կանեմ, որ իմ տունը լուսավոր մնա,
3) ես հաշվելու եմ իմ օրհնությունները,
4) ես կփորձեմ օգտի վերածել սա:

When William Sangster was told he was dying of progressive muscular atrophy, he made four resolutions and faithfully kept them: 1) I will never complain; 2) I will keep the home bright; 3) I will count my blessings; 4) I will try to turn it to gain.